

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ
ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Ստեփան Ասլանյանի և Արծրունի Աղաջանյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Մասնավոր խուզարկուական գործունեության մասին», «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ:

«Մասնավոր խուզարկուական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ՝

1. Վերնագրից ու տեքստից անհրաժեշտ է հանել «մասնավոր» բառը, քանի որ Հայաստանի Հանրապետությունում պետական խուզարկուներ նախատեսված չեն:

2. Օրենքի նախագծի հոդվածների՝ մասերի, կետերի, ենթակետերի և պարբերությունների համարակալումն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին:

3. 1-ին հոդվածի կապակցությամբ հայտնում ենք, որ՝

1) օրենքը ոչ թե «սահմանում», այլ կարգավորում է առավել կարևոր, բնորոշ և կայուն հասարակական հարաբերությունները: Հիշյալ առաջարկը բխում է նաև «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներից.

2) «և իրավաբանական» բառերն անհրաժեշտ է հանել, քանի որ «կազմակերպություն» հասկացության մեջ ներառվում է նաև «իրավաբանական անձ» հասկացությունը.

3) «պայմանագրային փոխհատուցման հիմքով մատուցվող ծառայությունները» բառերն անհրաժեշտ է հանել, քանի որ դրանք պայմանագրային դրույթներ են և ներկայացված օրենքի նախագծի կարգավորման առարկա չեն.

4) իրավաբանական և ֆիզիկական անձանց իրավունքները և պարտականությունները սահմանվում են օրենքով, այլ ոչ թե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 83.5-րդ և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները:

4. 2-րդ հոդվածից անհրաժեշտ է հանել՝

1) «նորմերն ու նորմատիվ» բառերը՝ հաշվի առնելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջները.

2) «ՀՀ Սահմանադրությունը,» և «այլ օրենքները,» բառերը, քանի որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և այլ օրենքներով մասնավոր խուզարկուական գործունեության իրավական հիմքեր նախատեսված չեն:

5. 3-րդ հոդվածի կապակցությամբ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության օրենքի գործողությունը չի կարող տարածվել Հայաստանի Հանրապետության սահ-

մաններից դուրս, մասնավորապես, Հայաստանի Հանրապետության օրենքը կարող է գործել միայն Հայաստանի Հանրապետության տարածքում:

6. 5-րդ հոդվածի՝

1) վերնագիրը չի բխում «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի **41-րդ հոդվածի 1-ին** մասի պահանջներից, մասնավորապես, հոդվածի վերնագիրը չի համապատասխանում հոդվածի բովանդակությանը.

2) առաջին պարբերությունում «թուլյատրվում է» բառը փոխարինել «խուզարկուն իրավունք ունի» բառերով.

3) **1-ին** և **9-րդ** մասերում հստակեցման կարիք ունի համապատասխանաբար «քաղաքացիական և վարչական գործերի քննման պրոցեսի մասնակիցներ» և «քրեական գործերի քննման պրոցեսի մասնակիցներ» արտահայտությունների իրավական բովանդակությունը.

4) **3-րդ** և **4-րդ** մասերի կապակցությամբ գտնում ենք, որ մասնավոր խուզարկուի կողմից չեն կարող իրականացվել վերոհիշյալ մասերով նախատեսված ծառայությունները: Մասնավորապես, խոսքը վերաբերում է սպառողական շուկայի հետազոտման, գործնական բանակցությունների համար տեղեկությունների հավաքագրման և այլ ծառայությունների.

5) **5-րդ** մասը չի բխում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության **23-րդ** հոդվածի պահանջներից.

6) **5-րդ, 6-րդ** և **8-րդ** մասերում «քաղաքացիների» բառն անհրաժեշտ է փոխարինել «անձանց» բառով, քանի որ նման ձևակերպման դեպքում քաղաքացիություն չունեցող անձինք և օտարերկրյա քաղաքացիները հնարավորություն չեն ունենա օգտվելու մասնավոր խուզարկուի ծառայություններից: Նույն դիտողությունը վերաբերում է նաև օրենքի նախագծի **13-րդ հոդվածի 1-ին** մասի երրորդ պարբերությանը.

7) 8-րդ մասից անհրաժեշտ է հանել «ձեռնարկությունների» բառը, քանի որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը «ձեռնարկություն» հասկացություն չի նախատեսում:

7. 6-րդ հոդվածը խմբագրման կարիք ունի, մասնավորապես, խուզարկուի գործունեությունը պետք է իրականացվի ոչ միայն իրավաբանական անձանց, այլև մարդու և քաղաքացու օրինական շահերը հարգելու և պահպանելու սկզբունքների հիման վրա:

8. 7-րդ հոդվածի`

1) 2-րդ մասը հիմնավորման կարիք ունի, մասնավորապես, պարզ չէ, թե լիցենզիայի գործողության ժամկետը ինչու է սահմանվում հինգ տարի, այլ ոչ ավելի կամ պակաս: Միաժամանակ հայտնում ենք, որ «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն բարդ լիցենզիան տրվում է անժամկետ: Նույն մասում հստակեցման կարիք ունի «լիցենզիան կարող է երկարաձգվել» արտահայտության իրավական բովանդակությունը, մասնավորապես, լիցենզիայի գործողության ժամկետի ավարտից հետո որ դեպքերում կարող է լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգվել, իսկ որ դեպքերում ոչ: Միաժամանակ հայտնում ենք, որ հիշյալ մասն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներին.

2) 3-րդ մասը խմբագրման կարիք ունի: Մասնավորապես, մասնավոր խուզարկուական գործունեության լիցենզիա, ըստ օրենքի նախագծի 4-րդ և այլ հոդվածների, կարող են ստանալ ոչ միայն կազմակերպությունները, այլ նաև ֆիզիկական անձինք: Նույն մասից անհրաժեշտ է հանել «ՀՀ արդարադատության նախարարության» բառերը` հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից մասնավոր խուզարկուական գործունեության լիցենզիայի տրամադրումը չի բխի նախարարության կանոնադրական խնդիրներից.

3) 4-րդ մասի`

ա. առաջին պարբերությունում պարզ չէ, թե ինչ «ՀՀ քաղաքացի լինելու մասին փաստաթղթի» մասին է խոսքը,

բ. հինգերորդ պարբերությունը հստակեցման և պարզաբանման կարիք ունի: Մասնավորապես, պարզ չէ, թե ինչ «խուզարկուի գործունեության տեսակի մասին» տեղեկատվություն ներկայացնելու մասին է խոսքը, քանի որ ներկայացված օրենքի նախագծի համաձայն տրվում է միայն մասնավոր խուզարկուական գործունեության լիցենզիա,

գ. հինգերորդ պարբերության և օրենքի նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասի երրորդ պարբերություններում առկա է ներքին հակասություն, մասնավորապես, 4-րդ հոդվածի 1-ին մասի երրորդ պարբերության համաձայն մասնավոր խուզարկուն բարձրագույն կամ համապատասխան մասնագիտական կրթություն ունեցող քաղաքացին է, իսկ 7-րդ հոդվածի 4-րդ մասի հինգերորդ պարբերության համաձայն լիցենզիա տալու պայման է համարվում բարձրագույն իրավաբանական, հատուկ մասնագիտական կրթությունը,

դ. վեցերորդ և յոթերորդ պարբերությունները հստակեցման և պարզաբանման կարիք ունեն: Մասնավորապես, պարզ չէ թե ինչ «առողջության մասին տեղեկանքի» և «կազմակերպության գործունեության վայրի վերաբերյալ տեղեկությունների» մասին է խոսքը և ում կողմից կամ ինչ կարգով պետք է տրամադրվեն վերոհիշյալ տեղեկանքն ու տեղեկությունները.

4) 4-րդ մասի վերջին պարբերությունը «ՀՀ օրենքով» բառերից առաջ անհրաժեշտ է լրացնել «Լիցենզավորման մասին» բառերով:

9. 8-րդ հոդվածի`

1) 1-ին մասը հստակեցման կարիք ունի: Մասնավորապես, պարզ չէ, թե լիազոր մարմինն ինչ չափանիշներից էլնելով և ինչ կարգով պետք է տրամադրի խուզարկուական գործունեությունն իրականացնելիս հատուկ կամ տեխնիկական միջոցների օգտագործման թույլտվությունը: Միաժամանակ հայտնում ենք, որ հատուկ կամ տեխնիկական

միջոցների օգտագործման թույլտվության կարգը պետք է սահմանվի ներկայացված օրենքի նախագծով.

2) 2-րդ մասից անհրաժեշտ է հանել «և այլ միջոցներ» բառերը և հստակ նշել խուզարկուի կողմից օգտագործվող հատուկ միջոցների տեսակները.

3) 3-րդ մասի կապակցությամբ հայտնում ենք, որ խուզարկուական գործունեության ընթացքում կիրառման ենթակա հատուկ կամ տեխնիկական միջոցների գործադրման կարգը պետք է սահմանվի ներկայացված օրենքի նախագծով, այլ ոչ թե Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 83.5-րդ և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները:

10. 9-րդ հոդվածի՝

1) վերնագիրը և 1-ին մասը «գործունեության» բառերից հետո լրացնել «լիցենզիայի» բառերով.

2) 1-ին մասից անհրաժեշտ է հանել «ու իրավական ակտերով» բառերը.

3) 3-րդ մասից հանել «կամ թույլտվություններ» բառերը, քանի որ օրենքի նախագծով նախատեսվող հատուկ կամ տեխնիկական միջոցների օգտագործման թույլտվությունները կարող են տրվել միայն մասնավոր խուզարկուական գործունեության լիցենզիայի առկայության դեպքում: Բացի դրանից մասնավոր խուզարկուական գործունեության լիցենզիայի և հատուկ կամ տեխնիկական միջոցների թույլտվության տրամադրումը տարբեր գործընթացներ են և դրանք պետք է տարանջատել.

4) 3-րդ մասի՝

ա. երկրորդ և երրորդ պարբերություններում հստակեցման կարիք ունի «զինվորական ծառայությունից խուսափած քաղաքացի» և «չի տարածվում բուժումն անցած քաղաքացու վրա» արտահայտությունների իրավական բովանդակությունը.

բ. վերջին պարբերությունն անհրաժեշտ է հանել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրենքի նախագծի 4-րդ, 7-րդ և այլ հոդվածների համաձայն մասնավոր խուզարկուական գործունեությամբ կարող են զբաղվել միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիները: Բացի դրանից նշված պարբերության դրույթները կրկնում են նույն հոդվածի 3-րդ մասի առաջին պարբերության և 4-րդ հոդվածի 1-ին մասի երրորդ պարբերության դրույթները.

5) 4-րդ մասը հստակեցման կարիք ունի, մասնավորապես, պարզ չէ, թե հատուկ կամ տեխնիկական միջոցների օգտագործման թույլտվությունների մերժման ժամկետները որ օրենքներով և այլ իրավական ակտերով են սահմանվում.

6) 5-րդ մասից անհրաժեշտ է հանել «թույլտվության» բառը, քանի որ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով հատուկ կամ տեխնիկական միջոցների օգտագործման թույլտվությունների տրամադրման համար պետական տուրք նախատեսված չէ: Միաժամանակ հայտնում ենք, որ լիցենզիայի տրամադրման համար սահմանվում է պետական տուրք՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և չափով, այլ ոչ թե վճար:

11. 10-րդ հոդվածի՝

1) անհրաժեշտությունը չկա, քանի որ դրանով նախատեսված դրույթները պայմանագրային դրույթներ են և ներկայացված օրենքի նախագծի կարգավորման առարկա չեն.

2) 2-րդ մասի կապակցությամբ հայտնում ենք, որ ոչ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով, ոչ էլ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով մասնավոր խուզարկուական գործունեության ընթացքում ծառայություններ մատուցելու պայմանագիրը և դրա կատարման հետ կապված այլ փաստաթղթեր ժամկետից շուտ ոչնչացնելու կամ դրանք կորցնելու համար պատասխանատվություն նախատեսված չէ: Բացի դրանից պարզ չէ, թե մասնավոր խուզարկուական գործունեության ընթացքում ծառայություններ մատուցելու պայմա-

նագիրը և դրա կատարման հետ կապված այլ փաստաթղթեր երեք տարի ժամկետով պատվիրատուի, թե մասնավոր խուզարկուական գործունեության լիցենզիա ունեցող անձի կամ կազմակերպության կողմից պետք է պահպանվեն:

12. 11-րդ հոդվածի`

1) 1-ին մասը չի բխում Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի և «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներից, մասնավորապես, մասնավոր խուզարկուն օպերատիվ-հետախուզական գործունեություն չի կարող իրականացնել:

2) 2-րդ մասի անհրաժեշտությունը չկա, քանի որ դրանով նախատեսված դրույթներն աշխատանքային իրավահարաբերություններ են և կարգավորված են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ ու օրենքի նախագծի կարգավորման առարկա չեն:

13. 12-րդ հոդվածի 1-ին մասի`

1) առաջին պարբերությունում «պահանջով» բառը փոխարինել «համար գրավոր հարցումով» բառերով:

2) երկրորդ պարբերությունում պարզ չէ, թե խոսքը ինչ «օրենքով չարգելված միջոցառումների» մասին է:

3) երրորդ պարբերությունը չի բխում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 23-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի և «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներից: Բացի դրանից պարզ չէ, թե որ «ՀՀ օրենքով սահմանված կարգով» մասնավոր խուզարկուն հանցագործություն հայտնաբերելիս` իրավունք ունի գրանցելու, լուսանկարելու, ձայնագրելու, տեսանկարահանելու և այլն:

14. 13-րդ հոդվածի`

1) վերնագրում «սահմանները» բառն անհրաժեշտ է փոխարինել «սահմանափակումները» բառով.

2) 1-ին մասը լիովին խմբագրման կարիք ունի, քանի որ դրանում նշված շատ գործառույթների իրականացումն արգելված է ցանկացած անձի համար: Ավելին, առանձին ղեկավարում դրանք առաջացնում են քրեական պատասխանատվություն:

15. 14-րդ հոդվածի անհրաժեշտությունը չկա, քանի որ դրանով նախատեսված հարաբերություններն արդեն իսկ կարգավորված են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, այլ օրենքներով և ներկայացված օրենքի նախագծի կարգավորման առարկա չեն:

16. 15-րդ հոդվածի անհրաժեշտությունը չկա, քանի որ դրանով նախատեսված որոշ հարաբերություններ արդեն իսկ կարգավորված են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով և այլ օրենքներով, իսկ որոշ դրույթներ չեն բխում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսդրության պահանջներից:

17. 6-րդ գլխի անհրաժեշտությունը չկա, քանի որ դրանով նախատեսված հարաբերություններն արդեն իսկ կարգավորված են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, այլ օրենսդրական ակտերով և ներկայացված օրենքի նախագծի կարգավորման առարկա չեն:

18. 18-րդ հոդվածում «հրապարակմանը» բառը փոխարինել «հրապարակման օրվան» բառերով՝ հաշվի առնելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները:

19. Միաժամանակ հայտնում ենք, որ ներկայացված օրենքի նախագիծն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 11-րդ մասի պահանջներին:

«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ՝

1. Նախագծի վերնագրից անհրաժեշտ է հանել «և փոփոխություն» բառերը, քանի որ ներկայացված օրենքի նախագծով կատարվում է միայն մեկ լրացում:

2. 1-ին հոդվածն անհրաժեշտ է խմբագրել և համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության 43-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերության և 39-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին պարբերության պահանջներին: Բացի դրանից «կետում» և «ենթակետ» բառերը համապատասխանաբար անհրաժեշտ է փոխարինել «բաժինը» և «կետ» բառերով, «ավելացնել» բառը՝ «լրացնել» բառով՝ հաշվի առնելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ և 6-րդ մասերի պահանջները: Միաժամանակ հոդվածով նախատեսված աղյուսակի վերջին սյունակն անհրաժեշտ է հանել, քանի որ այն ավելորդ է:

2. 2-րդ հոդվածը չի բխում «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներից, որոնց համաձայն «Նոր գործունեությունը լիցենզավորված կարող է ճանաչվել դրա մասին համապատասխան օրենքը հրապարակվելուց ոչ շուտ, քան 6 ամիս հետո»:

«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ՝

1. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածն անհրաժեշտ է խմբագրել և համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին պարբերության պահանջներին:

2. 1-ին հոդվածով նախատեսված 18.15.2-րդ ենթակետը չի բխում «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջ-

ներից: Մասնավորապես, նշված օրենքի համաձայն մասնավոր խուզարկուական գործունեության համար կադրերի ուսուցում և վերապատրաստում իրականացնող կրթական գործունեությունը լիցենզավորման ենթակա գործունեություն չի համարվում: Բացի դրանից «18.15.1» և «18.15.2» թվերն անհրաժեշտ է համապատասխանաբար փոխարինել «18.15» և «18.15.1» թվերով:

3. 2-րդ հոդվածով նախատեսված օրենքն ուժի մեջ մտնելու ժամկետն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ`

1. 1-ին հոդվածն անհրաժեշտ է խմբագրել և համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերության և 39-րդ հոդվածի 3-րդ մասի առաջին պարբերության պահանջներին:

2. 1-ին հոդվածով նախատեսված 170.13-րդ հոդվածի`

1) 1-ին և 2-րդ մասերի անհրաժեշտությունը չկա, քանի որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169-րդ հոդվածով արդեն իսկ պատասխանատվություն է նախատեսված առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա տնտեսական գործունեությամբ զբաղվելու համար.

2) 2-րդ մասը չի բխում նաև «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներից, մասնավորապես, հիշյալ օրենքի համաձայն մասնավոր խուզարկուական գործունեության համար կադրերի ուսուցում և վերապատրաստում իրականացնող կրթական գործունեությունը լիցենզավորման ենթակա գործունեություն չի համարվում:

3. 2-րդ հոդվածում «հրապարակմանը» բառը փոխարինել «հրապարակման օրվան» բառերով՝ հաշվի առնելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ խուզարկուական գործունեության ինստիտուտի ներդրումը վաղաժամ է, ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը կարիք ունի լուրջ հիմնավորման ու հիմնովին լրամշակման, և դեմ է ներկայացված օրենքների նախագծերի փաթեթի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Գևորգ Դանիելյանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ
Պ-616-08.05.2009-ՊԱ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

Մասնավոր խուզարկուական գործունեության մասին

ԳԼՈՒՄ I

Ընդհանուր դրույթներ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

Սույն օրենքը սահմանում է մասնավոր խուզարկուական գործունեության կազմակերպման եւ իրականացման կարգը, կազմակերպություններին, ֆիզիկական եւ իրավաբանական անձանց՝ պայմանագրային փոխհատուցման հիմքով մատուցվող ծառայությունները, նշված գործունեության մասնակիցների իրավունքներն ու

պարտականությունները, որոնք բխում են սույն օրենքից ու կանոնակարգվում է ՀՀ օրենսդրությամբ եւ ներկայացնում պատվիրատուի օրինական շահերն ու իրավունքները, մասնավոր խուզարկուական գործունեության սուբյեկտների փոխհամագործակցության կարգը պետական մարմինների հետ, իրավական ու սոցիալական ապահովության երաշխիքները:

Հոդված 2. Մասնավոր խուզարկուական գործունեության մասին օրենքի իրավական հիմքերը

Մասնավոր խուզարկուական գործունեության իրավական հիմքը հանդիսանում է ՀՀ Սահմանադրությունը, սույն օրենքը, այլ օրենքները, իրավական նորմերն ու նորմատիվ ակտերը, ՀՀ միջազգային պայմանագրերը: Եթե ՀՀ-ի միջազգային պայմանագրերով նախատեսվում են այլ նորմեր, որոնք նախատեսված չեն սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

Հոդված 3. Օրենքի գործողության ոլորտը

Սույն օրենքի գործողությունը տարածվում է Հայաստանի Հանրապետության տարածքում, իսկ նրա սահմաններից դուրս՝ ըստ միջպետական պայմանագրերի եւ տվյալ երկրներում գործող օրենքների:

Հոդված 4. Հիմնական հասկացություններ

Սույն օրենքում օգտագործվում են հետեւյալ հիմնական հասկացությունները.

- *Մասնավոր խուզարկուական գործունեություն* - լիցենզավորման ենթակա գործունեություն, որն իրականացվում է մասնավոր խուզարկուի կամ խուզարկուական գործակալության կողմից ֆիզիկական եւ իրավաբանական անձանց սույն օրենքով նախատեսված ծառայություններ մատուցելու միջոցով:
- *Մասնավոր խուզարկուական գործունեությունն իրականացնող իրավաբանական անձ /այսուհետ մասնավոր խուզարկուական գործակալություն/* - օրենքով սահմանված կարգով գրանցված գործակալություն, որն ունի մասնավոր խուզարկուական գործունեություն իրականացնելու լիցենզիա եւ մատուցում է մասնավոր խուզարկուի համապատասխան ծառայություններ:
- *Մասնավոր խուզարկու* - ՀՀ քաղաքացի, որն ունի բարձրագույն կամ համապատասխան մասնագիտական կրթություն, կամ իրավապահ մարմիններում ծառայության առնվազն երեք տարվա փորձ, ունի մասնավոր խուզարկուական գործունեություն իրականացնելու լիցենզիա:

Հոդված 5. Մասնավոր խուզարկուական գործունեության բովանդակությունը

Մասնավոր խուզարկուական գործունեության իրականացման ընթացքում թույլատրվում է մատուցել հետեւյալ ծառայության տեսակները.

1. Քաղաքացիական եւ վարչական գործերի քննման պրոցեսի մասնակիցների պատվերով տեղեկությունների հավաքագրում:
2. Ծնողների պատվերով անչափահաս երեխայի շրջապատի վերաբերյալ տեղեկությունների հավաքագրում:

3. Սպառողական շուկայի հետազոտում, գործնական բանակցությունների համար տեղեկությունների հավաքագրում, անվճարունակ եւ անվստահելի գործընկերոջ բացահայտում:
- 4.Ֆիրմային նշանների եւ անվանումների ապօրինի օգտագործման եւ առևտրային գաղտնիք պարունակող տեղեկությունների հրապարակման փաստերի հավաքագրում եւ բացահայտում:
5. Անհատ քաղաքացիների կենսագրական եւ այլ բնութագրական տվյալների բացահայտում /պատվիրատուի գրավոր համաձայնությամբ/:
- 6.Անհայտ կորած քաղաքացիների որոնում:
7. Կենդանիների որոնում:
8. Քաղաքացիների, ձեռնարկությունների, կազմակերպությունների կորած գույքի որոնում:
9. Քրեական գործերի քննման պրոցեսի մասնակիցների պատվերով տեղեկությունների հավաքագրում: Պայմանագրի կնքման պահից **24** ժամվա ընթացքում մասնավոր խուզարկուն պարտավոր է պատվերի մասին տեղեկացնել այն մարմնին, որի վարույթում է գտնվում տվյալ գործը:
10. Օրենքով չարգելված այլ կարգի տեղեկությունների հավաքագրում:

Հոդված 6. Մասնավոր խուզարկուի գործունեության սկզբունքները

Խուզարկուի գործունեությունն իրականացվում է օրինականության, մարդու եւ քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, իրավաբանական անձանց իրավունքներն ու օրինական շահերը հարգելու եւ պահպանելու սկզբունքների հիման վրա:

ԳԼՈՒԽ II

Մասնավոր խուզարկուական գործունեության լիցենզավորումը

Հոդված 7. Մասնավոր խուզարկուական գործունեության լիցենզավորումը

1. Մասնավոր խուզարկուական գործունեության լիցենզավորումն իրականացվում է «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, հաշվի առնելով սույն օրենքով նախատեսված առանձնահատկությունները:
2. Մասնավոր խուզարկուական գործունեության համար տրվում է բարդ ընթացակարգով լիցենզիա: Մասնավոր խուզարկուական գործունեության լիցենզիայի գործողության ժամկետը հինգ տարի է: Նշված ժամկետի ավարտից հետո գործունեության լիցենզիան կարող է երկարաձգվել:
3. Մասնավոր խուզարկուական գործունեությամբ զբաղվելու լիցենզիան տրամադրում է ՀՀ արդարադատության նախարարության լիազոր մարմինը /այսուհետ լիազոր մարմին/, որը հսկողություն է իրականացնում նաև լիցենզիա ստացած կազմակերպությունների կողմից լիցենզիայի պայմանները եւ պահանջները պատշաճ կատարելու նկատմամբ:

4. Մասնավոր խուզարկուական գործունեության լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ է անձամբ ներկայացնել.

- ՀՀ-ի քաղաքացի լինելու մասին փաստաթուղթ,
- ինքնակենսագրական հարցաթերթիկ,
- լուսանկար,
- սույն օրենքով նախատեսված մատուցման ենթակա մասնավոր խուզարկուի գործունեության տեսակի մասին տեղեկություն,
- բարձրագույն իրավաբանական, հատուկ մասնագիտական կրթության վկայական, կամ իրավապահ մարմիններին ոչ պակաս 3 տարվա ծառայության մասին տեղեկանք,
- տեղեկանք առողջության մասին,
- տեղեկություններ կազմակերպության գործունեության վայրի վերաբերյալ:

Մասնավոր խուզարկուական գործունեության համար լիցենզիայի տրամադրումը, վերաձեւակերպումը, գործունեության ժամկետի երկարաձգումը, կասեցումը կամ դադարեցումն իրականացվում է ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Հոդված 8. Մասնավոր խուզարկուական գործունեություն իրականացնելիս հատուկ կամ տեխնիկական միջոցների պահպանման, կրման եւ օգտագործման համար տրվող թույլտվությունը

Խուզարկուական գործունեությունն իրականացնելիս հատուկ կամ տեխնիկական միջոցների օգտագործման թույլտվությունը տրամադրում է լիազոր մարմինը:

Խուզարկուն անհրաժեշտության դեպքում, ինչպես նաեւ անվտանգության նպատակով որպես հատուկ միջոցների տեսակներ կարող է կրել եւ գործադրել՝ զրահաբաճկոն, ձեռնաշղթա, արցունքաբեր գազ, ռետինե մահակ, կայծային պարպիչ եւ այլ միջոցներ:

Խուզարկուական գործունեության ընթացքում կիրառման ենթակա հատուկ կամ տեխնիկական միջոցների, ձեռք բերման, գործադրման ու հաշվառման կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը:

Հոդված 9. Մասնավոր խուզարկուական գործունեության եւ հատուկ կամ տեխնիկական միջոցների պահպանման ու կրման թույլտվությունների տրամադրման մասին որոշումները

1. Մասնավոր խուզարկուական գործունեության եւ հատուկ կամ տեխնիկական միջոցների պահպանման, կրման ու կիրառման թույլտվությունների տրամադրման մասին որոշումները ընդունվում են սույն օրենքով եւ այլ օրենքներով ու իրավական ակտերով՝ սահմանված պահանջներին համապատասխան:

2. Լիազոր մարմինն իրավունք ունի ստուգել համապատասխան լիցենզիաների կամ թույլտվությունների տրամադրման համար ներկայացված փաստաթղթերի եւ տեղեկությունների հավաստիությունը:

3. Լիցենզիա կամ թույլտվություններ չի տրամադրվում.

- անչափահաս եւ ՀՀ քաղաքացիություն չունեցող անձանց,

- պարտադիր կամ այլընտրանքային զինվորական ծառայությունից խուսափած քաղաքացուն,

- բուժհիմնարկներում հոգեկան հիվանդության, հարբեցողության կամ թմրամոլության պատճառով հաշվառման կանգնած քաղաքացուն /չի տարածվում բուժումն անցած քաղաքացու վրա/,

- քրեական պատասխանատվության ենթարկված քաղաքացուն, եթե դատվածությունը հանված կամ մարված չէ,

- անհրաժեշտ փաստաթղթերը թերի ներկայացրած կամ դրանցում կեղծ տվյալներ ներկայացրած քաղաքացուն:

Մասնավոր խուզարկուական գործունեություն իրականացնելու լիցենզիա չի տրամադրվում օտարերկրյա քաղաքացիներին, քաղաքացիություն չունեցող անձանց /բացառությամբ փախստականների/:

4. Լիազոր մարմինը լիցենզիան կամ թույլտվությունը տրամադրում է կամ դրանց տրամադրումը մերժում է օրենքով եւ այլ իրավական ակտերով սահմանված ժամկետներում: Լիցենզիայի կամ թույլտվության տրամադրումը մերժելու դեպքում լիազոր մարմինը պարտավոր է այդ մասին գրավոր տեղեկացնել քաղաքացուն՝ նշելով այն պատճառները, որոնք հիմք են հանդիսացել մերժման համար:

Լիցենզիայի տրամադրման կամ մերժման ցանկացած վեճ կարող է բողոքարկվել դատական կարգով:

5. Լիցենզիայի թույլտվության տրամադրման համար վճարումների կարգն ու չափերը սահմանվում են ՀՀ օրենքով:

ԳԼՈՒԽ III

Մասնավոր խուզարկուական գործունեության պայմանագիր

Հոդված 10. Մասնավոր խուզարկուական ծառայություններ մատուցելու պայմանագիրը

1. Մասնավոր խուզարկուի կամ գործակալության եւ պատվիրատուի միջեւ ծառայություններ մատուցելու պայմանագիրը կնքվում է գրավոր՝ ՀՀ քաղաքացիական օրենսդրության եւ սույն օրենքի համաձայն.

- մասնավոր խուզարկուական ծառայություններ մատուցելու պայմանագրում նշվում է նաեւ գործունեության լիցենզիայի համարը եւ տրման տարեթիվը, պատվիրատուի հանձնարարության բնույթը /հաշվի առնելով գաղտնիության ապահովումը/, ծառայության տեսակը, կատարման ժամկետը, մատուցվող ծառայությունների ընդհանուր արժեքը, կողմերի պատասխանատվությունը եւ պարտավորությունները:

- պատվիրատուի հետ կնքած պայմանագրում նշվում է նաեւ գաղտնիության ապահովման պայմանները:

2. Ծառայություններ մատուցելու պայմանագիրը եւ դրա կատարման հետ կապված այլ փաստաթղթերը մասնավոր խուզարկուական գործունեության ընթացքում ենթակա են պահպանման՝ երեք տարի ժամկետով: Նշված փաստաթղթերը ժամկետից շուտ ոչնչացնելը կամ դրանք կորցնելը հանգեցնում է պատասխանատվության՝ օրենքով սահմանված կարգով:

3. Պայմանագրային պարտավորությունների կատարման հետ կապված վեճերը լուծվում են կողմերի համաձայնությամբ, իսկ անհրաժեշտության դեպքում նաեւ՝ դատական կարգով:

ԳԼՈՒԽ IV

Մասնավոր խուզարկուի գործունեությունը, իրավունքներն ու պարտականությունները

Հոդված 11. Մասնավոր Խուզարկու

1. Իր մասնագիտական պարտականությունները կատարելիս խուզարկուն համագործակցության շրջանակներում կարող է իրականացնել օրենքով չարգելված օպերատիվ-հետախուզական գործունեություն այն մարմինների հետ, որոնք ունեն օպերատիվ հետախուզական գործառույթը իրականացնելու իրավունք:

2. Գործակալությունում մասնավոր խուզարկու աշխատելու համար մասնավոր խուզարկուական գործակալության հետ անհրաժեշտ է կնքել աշխատանքային պայմանագիր եւ պայմանագիր կնքած քաղաքացուն տրվում է համապատասխան վկայական:

Հոդված 12. Մասնավոր խուզարկուի իրավունքները

Խուզարկուն իր մասնագիտական պարտականությունները կատարելիս իրավունք ունի.

- պայմանագրի հիմքում ընկած պարտավորությունների կատարման շրջանակներում տեղեկատվության տրամադրման պահանջով դիմել համապատասխան մարմիններին,

- պայմանագրի պայմանները ապահովելիս, իր իրավասիության շրջանակներում ծառայությունների մատուցման պայմանագրին համապատասխան իրականացնել օրենքով չարգելված միջոցառումներ,

- մասնավոր խուզարկուն խուզարկուական աշխատանքների կատարման ընթացքում հանցագործություն հայտնաբերելիս եւ բացահայտելիս իր գործունեությունը հիմնավորելու նպատակով ՀՀ օրենքով սահմանված կարգով իրավունք ունի գրանցել, լուսանկարել, ձայնագրել, տեսանկարահանել, վերցնել մատնահետք եւ նմուշներ, օգտագործել նույն տեղեկատվական համակարգերի տեսաձայնագրման, կինո-նկարահանման սարքավորումներ, տեխնիկական եւ հատուկ միջոցներ:

Հոդված 13. Մասնավոր խուզարկուի գործունեության սահմանները

1. Իր մասնագիտական պարտականությունները կատարելիս մասնավոր խուզարկուին արգելվում է.

- թաքցնել իրենց գործունեության ընթացքում հայտնի դարձած նախապատրաստվող կամ կատարված հանցագործությունների փաստը,

- ներկայանալ որպես իրավապահ կամ այլ մարմինների աշխատակից կամ օգտագործել պետական իրավապահ մարմինների տարբերանշաններ, համազգեստ եւ այլ խորհրդանիշեր,

- մասնավոր խուզարկուական ծառայություններ մատուցելիս քաղաքացիների իրավունքները եւ ազատությունները սահմանափակող, պատիվը եւ արժանապատվությունը ոտնահարող, ինչպես նաեւ կյանքը եւ առողջությունը վտանգող գործողությունների կատարում

- հրապարակել գործունեության ընթացքում իրեն հայտնի դարձած տեղեկությունները կամ դրանք անօրինական օգտագործել՝ ելնելով իր կամ այլ անձի շահերից,

- իրեն կցված հատուկ կամ տեխնիկական միջոցները, դրանց կիրառման թույլտվությունը, մասնավոր խուզարկուի վկայականը փոխանցել այլ անձանց:

2. Մասնավոր խուզարկուական այնպիսի գործողությունների իրականացումը, որոնք կապված են անձանց կյանքի կամ սեփականության, պատվի եւ բարի համբավի, անձեռնմխելիության երաշխիքների խախտման հետ հանգեցնում է ՀՀ օրենքով սահմանված պատասխանատվության:

Հոդված 14. Մասնավոր խուզարկուական գործակալությունների իրավաբանական միությունների եւ ուսումնական հաստատությունների ստեղծումը

1. Մասնավոր խուզարկու եւ խուզարկուական գործակալությունները իրենց ձեռնարկատիրական գործունեությունը համակարգելու ինչպես նաեւ ընդհանուր գույքային շահերը ներկայացնելու եւ պաշտպանելու նպատակով կարող են ստեղծել իրավաբանական անձանց միություններ:

-մասնակիցների որոշմամբ կարող են ստեղծվել տնտեսական ընկերություն, կամ լինել տնտեսական ընկերության մասնակից:

2. Մասնավոր խուզարկու պատրաստելու, վերապատրաստելու, որոկավորման բարձրացման նպատակով կարող են ստեղծվել ոչ պետական իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ուսումնական հաստատություններ:

Ուսումնական հաստատությունների վերահսկումը եւ լիցենզավորման տրամադրումը իրականացվում է ՀՀ օրենքով սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ V

Համագործակցությունը պետական մարմինների հետ

Հոդված 15. Մասնավոր խուզարկուական գործակալության հետ համագործակցության շրջանակները

1. Մասնավոր խուզարկուական գործակալության հետ համագործակցության շրջանակներում պետական մարմինները, պայմանագրի հիման վրա, իրավունք ունեն՝ ՀՀ օրենքով սահմանված կարգով

- գերատեսչական տեղեկատվական բազայի հիման վրա տրամադրել մասնավոր խուզարկուական գործակալությանը եւ խուզարկուին հետաքրքրող տեղեկատվություն,

- մասնավոր խուզարկուական գործակալության նկատմամբ սպառնալիք ծագելու դեպքում նրանց տրամադրել անհրաժեշտ ուժեր եւ միջոցներ,

- մասնավոր խուզարկուական գործակալություններին ցույց տալ իրավական եւ մեթոդական օգնություն,

- աջակցել խուզարկուական միջոցառումների եւ տեխնիկական միջոցների մշակման գործընթացին,

- աջակցել մասնավոր խուզարկուական գործունեության համար կադրերի ընտրության, ստուգման, ուսուցման, վերապատրաստման եւ որակավորման բարձրացման գործընթացին:

Ընդ որում, պետական մարմինները ՀՀ օրենքով սահմանված կարգով պարտավոր են .

- մասնավոր խուզարկուական գործակալության եւ խուզարկուի գրավոր կամ բանավոր հարցման դեպքում տեղեկատվություն տրամադրել ֆիզիկական անձի, օբյեկտի կամ պայմանագրով նշված կետերի շրջանակներում անվտանգությանը սպառնացող վտանգի վերաբերյալ, բացառությամբ այն դեպքերի, երբ տեղեկատվությունը համարվում է պետական կամ ծառայողական գաղտնիք,

- ապահովել համագործակցության շրջանակներում հայտնի դարձած առեւտրային կամ ծառայողական գաղտնիք համարվող տեղեկատվության գաղտնիությունը:

2. Պետական մարմինների հետ համագործակցության շրջանակներում մասնավոր խուզարկուական գործակալությունները եւ խուզարկուները պայմանագրի հիման վրա օրենքով սահմանված կարգով պարտավոր են

- տեղեկատվության ապահովման պայմանագրի հիման վրա արված գրավոր կամ բանավոր հարցման դեպքում տրամադրել պետական մարմիններին հետաքրքրող տեղեկատվություն,

- մասնակցել իրավակարգի պահպանության եւ հանցագործության դեմ պայքարի միջոցառումներին, աջակցել հետաքննչական եւ օպերատիվ-հետախուզական գործողությունների անցկացմանը:

3. Ընդ որում, գործակալությունները եւ անհատ խուզարկուները պարտավոր են պետական մարմիններին տեղեկացնել.

- իրենց կողմից բացահայտված պետության, հասարակության կամ քաղաքացիների անվտանգությանը սպառնացող վտանգի մասին,

- պատրաստվող կամ կատարված հանցագործությունների մասին եւ միջոցներ ձեռք առնել հանցագործության հետքերը պահպանելու ուղղությամբ, չվնասելով պայմանագրի կնքած մյուս կողմի շահերը,

- աջակցել հանցագործության մեջ կասկածվող անձանց վնասազերծման միջոցառումներին:

Մասնավոր խուզարկուի սոցիալական ու իրավական պաշտպանության երաշխիքները

Հոդված 16. Խուզարկուի սոցիալական պաշտպանվածությունը

Խուզարկուական գործունեությունը հաշվարկվում է քաղաքացու ապահովագրական եւ սոցիալական կենսաթոշակի նշանակման համար ստաժում, պայմանով, որ այդ ընթացքում կատարվել են օրենքով սահմանված համապատասխան վճարումները:

Հոդված 17. Մասնավոր խուզարկուի իրավական պաշտպանվածությունը

Խուզարկուն չի կարող հետապնդվել եւ պատասխանատվության ենթարկվել օրենքով սահմանված պարտականություններին ու իր իրավասիության սահմաններին համապատասխան իրականացրած գործողությունների համար:

ԳԼՈՒԽ VII

Եզրափակիչ դրույթներ

Հոդված 18. Օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

Նախագիծ
Պ-616'-08.05.2009-ՊԱ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում եւ փոփոխություն կատարելու մասին

Հոդված 1. Օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 18-րդ կետում ավելացնել նոր 12-րդ ենթակետ:

	18. Գործունեության այլ բնագավառներ										
12.	Մասնավոր խուզարկուական գործունեություն	ԿՄ	Բ	-	-	-	-	-	-	-	-

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

Նախագիծ
Պ-616'-08.05.2009-ՊԱ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (27 դեկ. 1997թ.) 19-րդ հոդվածի 18-րդ կետը լրացնել նոր 18.15.1 եւ 18.15.2 ենթակետերով՝ հետեւյալ բովանդակությամբ.

18.15.1 Մասնավոր խուզարկուական գործունեության համար	բազային տուրքի 50-ապատիկի չափով
18.15.2 Մասնավոր խուզարկուական գործունեության համար կադրերի ուսուցում եւ վերապատրաստում իրականացնող կրթական գործունեության համար	բազային տուրքի 50-ապատիկի չափով

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

Նախագիծ
Պ-616³-08.05.2009-ՊԱ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքը լրացնել **170.13** -րդ հոդվածով, հետեւյալ բովանդակությամբ.

Հոդված 170.13 Անօրինական մասնավոր խուզարկուական գործունեությունը

1. Առանց սահմանված կարգով տրված լիցենզիայի մասնավոր խուզարկուական գործունեության իրականացումը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի երեսունապատիկից մինչեւ հիսունապատիկի չափով:

2. Առանց համապատասխան թույլատվության (լիցենզիայի) մասնավոր խուզարկուական գործունեության համար կադրերի ուսուցումը եւ վերապատրաստումը իրականացնող կրթական գործունեությունը՝

կրթական հաստատության ղեկավարի համար առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի քսանապատիկից մինչեւ քառասունապատիկի չափով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

Հիմնավորում

**«ՄԱՍՆԱՎՈՐ ԽՈՒԶԱՐԿՈՒԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»,
«ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»,
«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ**

**ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» եւ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ**

Հայաստանի Հանրապետության անկախացումից հետո նոր տնտեսական հարաբերությունների ձեւավորումը հանգեցրեց հասարակության մեջ այնպիսի իրավական պահանջարկի առաջացմանը, ինչպիսին է ֆիզիկական եւ իրավաբանական անձանց, սեփականության ապահովման կազմակերպման անհրաժեշտությանը:

Խուզարկուական գործունեության բացակայությունը հնարավորություն չի տալիս պատշաճ հսկողություն սահմանել /միջազգային նորմերին համապատասխան/ հանցագործությունների մի շարք բացասական դրույթների նկատմամբ:

Ֆիզիկական եւ իրավաբանական անձանց իրավունքների եւ օրինական շահերի պաշտպանության իրականացման գործընթացը կարգավորող օրենքի նախագծի ընդունումը բարեփոխումների միջոցով կնպաստի իրավական համակարգի պահպանությանը եւ հանցավորության դեմ պայքարի արդյունավետության ապահովման բարձրացմանը:

Օրենքի նախագծի ընդունումը կապահովի միասնական պետական քաղաքականություն մասնավոր խուզարկուական գործունեության ոլորտում, օրենսդրորեն կամրագրի մասնավոր խուզարկուական գործունեության իրավական հիմքերը, բարենպաստ պայմաններ կստեղծի խուզարկուական գործունեության զարգացման համար: